



YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Ջորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրական գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու.և մշակույթ, թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼԱՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈԼՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵՔՍԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ և ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱՖՅԱՆՏԱՍՏԻԿԱՅԻ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գայանե Մուրադյան
Երևանի պետական համալսարան

Գիտաֆանտաստիկ դիսկուրսը սերտորեն առնչվում է մարդաբանությանը, որի շնորհիվ էլ մարդաբանական խոսքին բնորոշ լեզվական տարրերը, զուգորդվելով գեղարվեստական լեզվարտահայտչամիջոցների հետ, յուրօրինակ լեզվական միաձուլումներ են առաջացնում տվյալ դիսկուրսում: Իմաստային և վերնշանային մակարդակներում իրացվող գիտական և գեղարվեստական տարրերի, հասկացությունների ու փոխաբերությունների լեզվառճական և արտարկային քննությունը թույլ է տալիս տարբորոշել ոչ միայն գիտաֆանտաստիկ լեզվական տարրերի կողմից իրացվող հաղորդման և ներգործման գործառույթները, այլև բացահայտել դրանց բնորոշ «ճանաչողաբանական» որակներն ու առանձնահատկությունները մարդաբանական գիտաֆանտաստիկայում:

Բանալի բառեր. *մարդաբանական գիտաֆանտաստիկա, ճանաչողություն և երևակայություն, լեզվառճական վերլուծություն, արտարկում:*

Ներածություն

Փաստ է, որ գիտությունը գիտաֆանտաստիկ դիսկուրսի կարևորագույն և հիմնարար աշխարհայացքն է (Suvin 1979), որ գիտաֆանտաստիկական գեղարվեստական գրականության մյուս ժանրերից տարբերվում է նրանով, որ գեղագիտական ու հուզական զգացողություններ արթնացնելուց բացի, միտված է որոշակի «լուրջ» ազդակների միջոցով ներգործել ընթերցողի վրա: Ժանրի համընդհանուր գիտականությունը դրսևորվում է հենց այդ ազդակների ամբողջությամբ:

Պատմաբան Հ. Բ. Ֆրանկլինը (1978) գիտաֆանտաստիկական սահմանում է որպես գեղարվեստական գրականության այնպիսի տեսակ, որն, «աճելով» գիտության ու տեխնիկայի զարգացմանը համընթաց՝ չափում և գնահատում է այդ առաջընթացը և իմաստավորում այն մարդկային գոյության համատեքստում: Ճարտարագետ և ֆիզիկոս Ա. Լովը (2000) գիտաֆանտաստիկական սահմանում է որպես այնպիսի գեղարվեստական գրականություն, որն արտացոլում է հեղինակի բնագիտական պատրաստվածությունը, նախկին գիտափորձերի իմացությունը, մարդկային հասարակության և մարդ-արարածի վրա «գիտական մեթոդների և գիտական փաստերի ապագա ազդեցությունները»: Գիտաֆանտաստիկայի հեղինակ և տեսաբան Բ. Ալթերբրին իր «Ֆանտազիայի ռազմավարությունը» (1992:107) հետազոտության մեջ նշում է, որ գիտաֆանտաստիկ ժանրն առաջնորդվում է այն գաղափարով, որ գիտությունը ժանրի «**մեզատեքստն**» է, երևակայության աղբյուրը, շարադրանքը պայմանավորող այն գործոնը, որը «պարուրում, սատարում և հիմնավորում է գիտաֆանտաստիկական այնպես, ինչպես Աստվածաշունչն է հիմնավորում քրիստոնեական բանաստեղծականությունը»:

Գիտական «մեգատեքստն» իհարկե բազմազան է, և դրանում կարևոր տեղ է գրավում մարդաբանությունը/անտրոպոլոգիային: Ինչպես մարդաբանությունը, այնպես էլ **մարդաբանական գիտաֆանտաստիկական** կարևորում է մարդկության անցյալը, ներկան և ապագան և փորձում է գիտությունների և գիտելիքի քննության միջոցով հասնել մարդկության հետ կապված խնդիրների լուծմանը: Որպես սոցիալական գիտաֆանտաստիկայի մաս՝ մարդաբանական գիտաֆանտաստիկական ուշադրություն է սևեռում գիտաֆանտաստիկայի՝ մարդաբանության հետ ունեցած սերտ կապի վրա, փորձելով պատասխանել մարդկությանն առնչվող մի շարք հարցերի: Մարդաբանության և գիտաֆանտաստիկայի կապի շնորհիվ մշակութային արժարժույթները դառնում ավելի «ինքնաքննադատական» և «ինքնագիտակցական», առջ էն քաշվում ազգերի ու մշակույթների, լեզվի ու հաղորդակցության այլ ձևերի, լեզվի և դիսկուրսի միջոցով իշխանության, սոցիալական փոփոխության հասնելու գաղափարներ ու տեսլականներ: Ավելին, հենց մարդաբանական գիտաֆանտաստիկական է, որ տալիս է այն հարցի պատասխանը, թե ի՞նչ է մարդը, մինչդեռ մարդաբանություն գիտությունը դեռևս մտորում է, թե ինչպե՞ս ձևակերպի այդ հարցի պատասխանը (Stover and Harrison 1968:472-473):

Մարդաբանական գիտաֆանտաստիկայի թեմատիկական և ոճը

Մարդաբանական ոլորտները՝ սոցիոմշակութային, կենսաբանական, հնեաբանական և լեզվաբանական, սերտորեն առնչվում են գիտաֆանտաստիկ դիսկուրսին, քանի որ շոշափում են խոսքային այս դրսևորման համար կարևորագույն համարվող խնդիրներ, երևույթներ, հասկացություններ: Նշենք դրանցից ամենակարևորները. մարդկանց և մարդկային հասարակություններին վերաբերող նմանություններ ու տարբերություններ, ազգ, սեռ, գենդեր, դասակարգ, գիտելիք, ճշմարտություն, իշխանություն, արդարություն, աշխատանք, շրջակա միջավայր, կրթություն, կենսաբանական ծագում, էվոլյուցիա, բազմազանություն, կյանքի տևողություն, ճանաչողություն, նախապատմություն, անցյալի ազգեր, մշակույթներ, սոցիալական խմբեր, գաղափարախոսություն, սոցիալական կյանքի վրա լեզվի ազդեցություն, հաղորդակցության ձևեր, սոցիալական ինքնություն, խմբային պատկանելություն, հավատք և գաղափարախոսություն, լեզվի և դիսկուրսի միջոցով ուժի, իշխանության, անհավասարության, սոցիալական փոփոխության գաղափարների պարզաբանում և ընկալում (*What is Anthropology?* 2010):

Նախորդ դարավերջին ձևավորված մարդաբանական գիտաֆանտաստիկական,¹ այսպիսով, պարզաբանում է, թե ինչ է մարդը (նաև «ոչ մարդը»), պատմում մարդու պատմությունը՝ սկսած նախամարդ-կապկից մինչև տիեզերագնաց-մարդը, հետազոտում երկրային, վերերկրային և ներերկրային մարդկային (նաև «ոչ մարդկային») բազմազանությունը, բանականությունը, մտքի թռիչքը, զգացմունքները, մարդկային (նաև «ոչ մարդկային») անցյալի և ապագայի համագոյակցության և հաղորդակցության ձևերը, կենսաբանական, մշակութային, քաղաքական, տնտեսական, կեցության շառանգաձևատկությունները: Ընդ որում «մարդկայինի» ուսումնասիրությունն ավելի դյուրին է դառնում «ոչ մարդկայինի» հետ համեմատության և հակադրության ետնապատկերի վրա:

Գիտաֆանտաստիկ մարդաբանական թեմատիկան բազմազան է. այլմոլորակային մարդկային կամ տեխնոլոգիական հասարակարգեր, բնական ճանապարհով կամ երկրագնդին վրա հասած ինչ-որ աղետից և ավերածությունից հետո մարդկությանը փոխարինած կենսաբանական կամ ոչ կենսաբանական երկրաբանակներ, նոր ցեղային մշակույթ կամ այլմոլորակայիններ, կորած և այլ ժամանակատարածական հարթություններում հայտնված երկրաբանակներ, բանական մարդուն և մարդկությանը հետազոտող այլմոլորակային մարդաբան-գիտնականներ, մարդկության կենսաբանական և սոցիալական էվոլյուցիա՝ անցյալից մինչև մոտ կամ հեռավոր ապագա: Օրինակ, Մ. Բիշոփի հանրահայտ «Ճավատարմություն»՝ *Allegiances* (1978:53-124) վեպում դիտարկվում է ընդհանրապես գիտաֆանտաստիկային և մասնավորապես դրա մարդաբանական դիսկուրսին բնորոշ երկու թեմա՝ գլոբալիզացիայի և ազգերի միաձուլման արդյունքում ձևավորված **մարդկային նոր տարատեսակ և համակեցության նոր ձև/բնատարածք**: Լայն համատեքստի լեզվառձական-ճանաչողական արտարկումները թույլ են տալիս բացահայտել, որ մեկ բառով արտահայտված, նվիրվածություն խորհրդանշող վերնագիրը (*allegiances* նշանակում է «հավատարմություն») ընդլայնված փոխաբերությամբ է, որը վերաբերում է մոտ ապագայում (2066 թվականինին) Երկիր մոլորակի ներսում բնակվող ազգային ինքնության նշույլները դեռևս պահպանած, հատուկ հանձնարարություն իրականացնող արշավախմբի անդամներին, մոլորակի ներսից փախած, վայրենիներ համարվող մի այլ խումբ մարդկանց և արհեստածին կամ այլմոլորակային արարածների ներդաշնակ փոխհարաբերություններին: Չնայած քաղաքական, դասակարգային և աշխարհայացքային տարբերություններին՝ «որսորդները» (ներմոլորակայինները) ու «որսերը» (վերմոլորակայիններն ու այլմոլորակայինները) խաղաղ համագոյակցում են, աչքի են ընկնում խմբային մտածողությամբ և միմյանց նկատմամբ հավատարմությամբ: Ինչ վերաբերում է երկրագնդի ներսում տեղակայված կամարած քաղաքին (*domed city*),² այն վիպակում արտացոլվում է *Քաղաքային միջուկ (Urban Nucleus)* անվամբ և ոչ այլ ինչ է, քան անցյալի ամերիկյան Ատլանտա քաղաքը, որը մոլորակին հասած ինչ-որ աղետի հետևանքով ավերվել է, ապա՝ վերափոխվել ըստ վերոնշյալ քաղաքաշինական մոդելի, և, ըստ էության երկրի մեջ մխրձված կոնաձև հսկայական փոս է, որտեղ դասային աստիճանակարգության սկզբունքով տեղակայված են մարդկանց կացարանները: Քաղաքի կենսագործունեությունը կախված է քաղաքն ամբողջությամբ պատած ապակյա կամարի միջով ներթափանցող արևի էներգիայից:

*As we got closer and closer to the dwelling place of our **targets**, I began thinking about what sort of living accommodations a man like Trap would receive if he lived in the **Urban Nucleus**. Since most of the surface side ghettos had been razed, he would most likely go under: most likely **Level 7, or 8 or maybe even 9. The circles of Dante's Hell**, our cynical professor types always called them. **A few of the absolutely shiftless sort have been consigned to the Big Bad Basement, but you can find plenty of those upstairs too.** [...] **On Highway 57**, without ever having met him, I was*

*proud of Jonah Trap for shunning the whales belly of the Urban Nucleus
and forging a life for himself and his family in the Open.*

(Bishop 1978:86)

Լեզվառճական-ճանաչողական վերլուծության և արտարկումների արդյունքում պարզվում է, որ ռազմական *targets* տերմինի կիրառությունը ակնարկ է *Urban Nucleus* (*Քաղաքային միջուկ*) ներերկրային քաղաքից *երկրի մակերևույթ* (*the Open*) դուրս եկած արշավախմբի հատուկ կառավարական հանձնարարությանը՝ գտնել և վերադարձնել քաղաքից երկրի մակերևույթ փախած հանճարեղ գիտնական Դ. Թրափին և նրա ընտանիքին, որոնք էլ հենց համարվում են *թիրախ*: Անմարդաբնակ դարձած երկրային տարածքի որոշակի մի հատվածը նշվում է որպես *Highway 57* (*Մայրուղի 57*), որը նույնպես տերմին է և առնչվում է ռազմական քարտեզագրությանը: Քաղաքի և փախստականների վերաբերյալ արշավախմբի անդամներից մեկի՝ երիտասարդ գիտնական Քլիո Նոբլի մտորումները վկայում են, որ նա արդեն սկսել է քննադատաբար մոտենալ քաղաքի ղեկավարությանը, քաղաքային կացութաձևին ու կեցությանը և կասկածել իրենց առաքելության արդարացիությանը, քանի որ տեսնում է, որ կամարաձև քաղաքից դուրս գոյություն ունի ևս մեկ, Երկրի վրա գոյատևող քաղաքակրթություն, որն ազատությունը համարում է բարձրագույն արժեք: Շարախախտման ռճական հնարի միջոցով կամարաձև քաղաքի խորքային մակարդակները (*Մակարդակ 7 կամ 8 և երևի նույնիսկ 9*), որտեղ ապրում է հասարակության աղքատ, կրթություն և մասնագիտություն չունեցող խավը, համեմատվում է դանթեական դժոխքի հետ (*Level 7, or 8 or maybe even 9. The circles of Dante's Hell, our cynical professor types always called them*): *Absolutely shiftless sort* (*բացարձակապես անուղղելի տեսակ*) և *Big Bad Basement* (*Մեծ վստ նկուղ*) առնչանակային շարույթները մեծապես նպաստում են *A few of the absolutely shiftless sort have been consigned to the Big Bad Basement, but you can find plenty of those upstairs too* ասույթի հեգնական երանգավորմանը՝ հանցագործներից քչերն են դատապարտվում ապրելու ամենաստորին մակարդակում կամ նկուղում, արտոնյալ վերնախավի «հանցագործներն» ապրում են վերններում: Իմաստային և հուզական բարձրացող աստիճանավորումը եզրափակվում է իսկական փոխաբերությամբ և փոխանունությամբ, որոնց միջոցող Քլիոն իր հիացմունքն է արտահայտում ներերկրյա քաղաք-կետաձևական փոքրից փախած (*shunning the whales belly of the Urban Nucleus*) և վերերկրյա բնական միջավայրում (*the Open*) ազատության մեջ բնակվող գիտնական Թրափի նկատմամբ:

Մ. Բիշոփի վեպում վերոնշյալ երկու թեմաներից (մարդկային նոր տարատեսակ, ապագայի բնատարածք) բացի թեթևակի անդրադարձ է կատարվում նաև մեկ այլ կարևոր գիտաֆանտաստիկ մարդաբանական թեմայի՝ արհեստածին կամ **այլմոլորակային** էակներին, որոնք խաղաղ և ներդաշնակ համագոյակցում են մարդածին հերոսների հետ: Հետաքրքրական է կամարաձև քաղաքի բնակիչների և Դ. Թրափի ընտանիքի հետ ապրող այլմոլորակայինների առաջին հանդիպումը: Այլմոլորակայինների նկարագիրը լեզվական արտահայտություն ստացած երևակայության վառ դրսևորում է:

And woke up to the shrill, repeating shouts of someone downstairs, terrifyingly like war whoops from the ghosts of murdered red men: war whoops rising from Jonah Trap's house as if the prelude to a general massacre. [...] We were midway down the steps and I could see two creatures in the parlor as if they were lepers hovering inside the mouth of a cave, cerements for garments, mummy-cloth unwinding from their arms – except that what I first saw as unwinding bandages were in reality the loose, ribbonlike extensions of their incredibly long forearms. Each creature, behind its head, had a corona of bone or cartilage that extended its height and gave it an out-of-time, out-of-place regality.

(Bishop 1978:116, 119)

Գեղարվեստական կրկնակի համեմատությամբ (*like war whoops, as if the prelude to a general massacre*), հարակրկնությամբ (*war whoops*), համեմատությունների ոճական ներուժն ինտեսիվացնող ներակա առնչայնականությամբ օժտված *-ly* գործուն վերջածանցով կազմված բառային շարույթով (*terrifyingly*) և որոշչային շարահյուսական շարույթով (*general massacre*) հազեցած ասույթը այլմոլորակայինների հետ հանդիպման արձագանքը ներկայացնում է որպես ամերիկյան սպանդի ենթարկվող հնդկացիների մահվան ճիշ, որպես համընդհանուր ցեղասպանությանը նախորդող սահմոկեցուցիչ վայնասուն: Գեղարվեստական մեկ այլ համեմատությամբ (*as if they were lepers*) այլմոլորակայինները պատկերվում են որպես ձեռքերից կախված մահվան սավանները օդում ծածանող բորոտներ (*cerements for garments, mummy-cloth unwinding from their arms*) բայց, ինչպես պարզվում է, քանդվող վիրակապեր հիշեցնող սավանները նրանց անհավատալիորեն երկար, ժապավենանման վերին վերջույթների մասն են կազմում (*loose, ribbonlike extensions of their incredibly long forearms*): Գործուն վերջածանցով կազմված *ribbonlike* առնչանակային բառային շարույթը և *incredibly long forearms* շարահյուսական շարույթը մեծ դրամատիզմ են հաղորդում նկարագրին, որի բարձրացող աստիճանավորումը հանգուցալուծվում է պատկերային վերջին մի դետալով՝ այլմոլորակայինների գլխի ետնամասից վեր է բարձրանում ոսկրային կամ կրճիկային շրջանակաձև ելունդ, որը նրանց տարերկրային, տարածամանակյա արքայական տեսք է հաղորդում (*Each creature, behind its head, had a corona of bone or cartilage that extended its height and gave it an out-of-time, out-of-place regality*):

Հատվածը մարդաբանական գիտաֆանտաստիկային բնորոշ նկարագրություն է, որը բառային արվեստի համար հատկանշական ներագման և գեղագիտական ուժի շնորհիվ գունագեղ մտազուգորդումներ և վառ մտապատկերներ է առաջացնում ընթերցողի մոտ:

Եզրակացություն

Այսպիսով, մարդաբանական գիտաֆանտաստիկան տվյալ դիսկուրսի այլ ենթաժանրերից տարբերվում է նրանով, որ մարդաբանական խոսքին բնորոշ լեզվական տարրերը, զուգորդվելով գեղարվեստական լեզվարտահայտչամիջոցների հետ, յուրօրինակ լեզվական միաձուլումներ են առաջացնում գրական այս դրսևորման մեջ: Ընդհանրապես գիտաֆանտաստիկային և մասնավորապես դրա մարդաբանական ձևին բնորոշ թեմատիկային (գլոբալիզացիա, ազգերի միաձուլման արդյունքում ձևավորված մարդկային նոր տարատեսակ/համակեցության նոր ձև, արհեստածին կամ այլմոլորակային էակներ) առնչվող լեզվական նյութի իմաստային և վերնշանային մակարդակներում իրացվող գիտական և գեղարվեստական տարրերի, հասկացությունների ու փոխաբերությունների լեզվառճական և արտարկային քննության արդյունքում պարզվում է, որ լայն առումով գիտաֆանտաստիկ այս ենթաժանրը մարդ-անհատին, մարդ-տեսակին և մարդկային հասարակությանը նոր համատեքստում պատկերելու փորձ է, լեզվական արտահայտություն ստացած երևակայության վառ դրսևորում և իրացնում է ինչպես հաղորդման, այնպես էլ ներգործման (գեղագիտական) գործառույթներ:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անգլալեզու մարդաբանական գիտաֆանտաստիկայի լավագույն ներկայացուցիչներ են համարվում Չ. Օլիվերն ու Ու. ԼեԳուինը, ինչպես նաև Մ. Բիշոփը, Ջ. Ռասսը և Յ. Ուաթսոնը (տես Westfahl 2008:189; Collins 2004:243):
2. Գիտաֆանտաստիկ կամարածն քաղաքի գաղափարը ներկայումս համարվում է լիովին իրատեսական: Գիտնականները համոզված են, որ արեգակնային էներգիայի շահագործման շնորհիվ քաղաքը ոչ միայն մշտապես ապահովված կլինի ջերմությամբ, այլև զերծ կմնա տարատեսակ աղտոտումներից, ճառագայթումից, մանրէներից: Գաղափարը կյանքի կոչելու ուղղությամբ քայլեր են ձեռնարկվել Ռուսաստանում: Հաշվարկվել է, որ սիբիրյան ադամանդի հսկայական հանքերից մեկը լիովին կարող է վերածվել կամարածն քաղաքի (տես Ball 2013): Թեև այս հավակնոտ նախագիծը դեռևս չի իրականացվել և հայտնի չէ, թե երբ կիրականացվի, այդուհանդերձ դրա ստեղծման հնարավորությունը մեկ անգամ ևս փաստում է գիտաֆանտաստիկայի և գիտության, մարդկային երևակայության և բանականության անխզելի կապը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Attebery, B. (1992) *Strategies of Fantasy*. Bloomington: Indiana University Press.
2. Ball, M. (2013) *Cities of the Future: the Domed City of Mir*.//Science and Technology. Available at: <<http://www.scifiideas.com/science-2/cities-of-the-future-the-domed-city-of-mir/>> [Accessed August 2014].
3. Bishop, M. (1978) *Allegiances*. // The Best from Galaxy. Volume IV. NY: Ace Books.

4. Collins, S.G. (2004) *Scientifically Valid and Artistically True: Chad Oliver, Anthropology, and Anthropological SF.* // Science Fiction Studies, Volume 31/2. Greencastle IN, DePaw University Press.
5. Franklin, H. B. (1978) *Future Perfect: American Science Fiction of the 19th Century.* NY: OUP.
6. Love, A.E.Jr. (2000) *Physics in Science Fiction.* (Copyright 1998-2014) Available at: <<http://www.larryniven.net/physics.shtml>> [Accessed July 2015].
7. Stover, L. and Harrison, H. (1968) *Apeman, Spaceman.* London: Penguin.
8. Suvin, D.R. (1979) *Metamorphoses of Science Fiction: On the Poetics and History of a Literary Genre.* New Haven and London: Yale University Press.
9. Westfahl, G. (2008) *Hard Science Fiction.* // A Companion to Science Fiction. Malden: Blackwell.
10. *What is Anthropology?* (2010) American Anthropological Association. Available at: <<http://www.aaanet.org/about/WhatisAnthropology.cfm>> [Accessed July 2015].

Anthropological Implications of Science Fiction

The genre of science fiction is closely related to anthropology, due to which the linguistic units typical of anthropological science, juxtaposing with expressive means of verbal art, form unique science fictional convergences of concepts and images. The linguostylistic and extrapolative analyses of linguistic units carried out on the semantic and metasemiotic levels of investigation reveal that the mentioned units not only inform the readers and impact them emotionally but also realize their cognitive and imaginative capacities in anthropological science fiction.

Антропологические свойства научно-фантастического дискурса

Жанр научной фантастики тесно связан с антропологией. В результате языковые единицы, характерные для антропологической науки, сопоставляются с выразительными средствами словесного искусства, формируя уникальные научно-фантастические конвергенции понятий и образов. Лингвостилистический и экстраполяционный анализ языковых единиц, проведенный на семантическом и метасемиотическом уровнях исследования, показывают, что вышеупомянутые единицы не только информируют и оказывают эмоциональное воздействие на читателя, но и реализуют свои когнитивные и образные способности в антропологической научной фантастике.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrтчyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrтчyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, ք.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // *Investigations in Linguistics*. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // *The European English Messenger*. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru